

795

ՀԱՅ ՍԿՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿՐԵՐ
Ա.Ս.Ը.Ս.Ի
ԶԻՄՆԵՐԱԼ 1918 ԻՆ



ORGANE
DES SCOUTS ARMENIENS
FONDE EN 1918

"ՀԱՅ ՏԿՈՒՆ"

Գ. ՏԱՐԻ (ՆՈՐ ՇՐՋԱՆ)

ԹԻՒ 4

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ 1930

Հ. Մ. Ը. Մ. ը մարզական (sport) կազմակերպութիւն
մը չէ, հայերու մէջ միակ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ (Education
physique) Միութիւնն է ան, որ իրարմէ անկախօրէն կը վարէ
սկառուտական եւ մարզական երկու շարժումները:

Հ. Մ. Ը. Մ. ը ֆիզիքա-բարոյական, ինչպէս նաև ժա-
մանակի եւ նիւթական ինայողութեան տեսակէտով՝ իմաստուն
գիւտ մըն է, որ պիտի ուզեն որդեգրել՝ մանաւանդ մեղի պէս
փոքրաթիւ շատ մը ազգեր:

Ազգովին փարինք անոր եւ աշխատինք ամուր ու տեւական
հիմի մը վրայ դնելու դայն:

ՈՒՃԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՆՈՐ ՀԱՍՑԵԻՆ

(ՏԵՍ ՄԻՒՍ Է. Տ. Ը.)



ՀԱՅ ՍԿՈՒԵՏԸ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԲԵՐՔ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա, Սուրիա, Յունաստան, Պուլկարիա, Ռումանիա 35 ֆրանք
Միւս երկիրներ 2 սովոր

ՀԱՏԸ 2 ՖՐԱՆՔ

(ԳԵՂԱՄԱՆԵԱՅ ՅՈՒՆԻՆՔ)

Պարզ նամակ, յօդուած, նկար, թերթ, գիրք, եւն. ղրկել պիշտ հետեւեալ հասցեով
Revue HAI - SCOUT, U. G. Arménienne
1, Rue Saulnier, Paris (9^o)

Դրամ, ապահովագրեալ նամակ, չէք, մանտափոստ ղրկել Միութեան գանձապետին
հետեւեալ հասցեով

M^r H. Zahrédjian, 53 Faub. Montmartre, Paris (9^o)

Հ. Մ. Լ. Մ. ի ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵՆ Է՝
U. G. Arménienne de Culture Physique et de Scoutisme
1, Rue Saulnier, Paris (9^o), 5րդ յարկ. մէթրօ Cadet.

ԿԱՐԵՒՈՐ

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ Հ. Մ. Լ. Մ. ի բոլոր շրջաններէն եւ Մասնաճիւղերէն.

1. Իրենց որոշ հասցէն ղրկել մեզ անյապագ:


2. Իրենց գործունէութեան մասին օրը օրին թղթակցութիւններ եւ տեղեկութիւններ ղրկել կարճ ու ամփոփ եւ ընթեռնելի զիրով, մասնաւորապէս օտար եւ յատուկ անունները որոշ զրել:

3. Սկառտականը եւ մարզականը զատ թուղթերու վրայ զրել, առանց իրարխանելու: Նկարներուն տակ յստակ զրել բացատրութիւնները:

4. Տեղեկացնել քանի օրինակ թերթ կ'ուզուի եւ սպառումի համար պատասխանատու անձ մը ցուցնել, եւ աւելցած թիւերը ղրկել մեղի:

ԶԵԿՈՅՑ

Տալարանական եւ վարչական կազմակերպութեան պատճառով, թերթիս այս թիւը ուշացաւ. ներողամիտ կ'ըլլան մեր ընթերցողները. յաջորդ թիւերը ամէն ամիս կանոնաւոր կերպով լոյս պիտի տեսնեն:



ՊԱՇՏՈՆԱԹԵՐՔ

A.S.C.U.

ՀԱ 1918 ՄԱՍՆԱԿՑԱՆ

"ՀԱՅ ԱԿԱԴԻՄԻ"



ORGANE
DES SCOUTS ARMENIENS

FONDE EN 1918

"ՀԱՅ ԱԿԱԴԻՄԻ" SCOUT"

Գ. ՏԱՐԻ (ՆՈՐ ՇՐՋԱՆ)

ԹԻՒ 4

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ 1930

ՍԻՐԵԼԻ ԱԿԱԴԻՄԻ

Մարգուն համար, ամէնակարեւոր տեղը կը բռնէ բարձր նկարագիրը, ան-
նկարագիր մէկը ոչ մէկէն կը սիրուի:

Յիշէ որ քու էութիւնդ ծնողքիդ կը պարտիս, անոնք քեզի համար ամէն
դժուարութիւն սիրով տարած են, ամենամեծ ապերախտութիւնը պիտի ըլլայ
եթէ, իբր պարտաճանաչ զաւակ չկարենաս փոխարինել իրենց:

Յարգէ և պաշտպանէ, առանց բացառութեան և դասակարգի խտրութեան,
կիներն ու աղջիկները և վարուէ ու խօսէ անոնց հետ այնպէս, ինչպէս պիտի
ուղէիր ուրիշներ վարուին քու մօրդ կամ քրոջդ հետ:

Յարգէ նաեւ ծերերը և տարիքուտ մարդիկը, իրաւ է թէ անոնք քեզի չափ
նորութիւններու ծանօթ չեն և չեն հետեւիր, բայց իրենց տարիքին փորձառու-
թիւնը ունին:

Ոչ միայն խաղերու և մարզանքի մէջ, այլ ամէն գործի մէջ ինչ որ կ'ընես,
օրէնքները յարգէ, գիտցիր որ օրէնքը բռնաբարելով շահուած խաղ մը կամ մար-
զանք մը, շահուած չէ այլ գողցուած է:


Մի վախնար և մի քաշուիր ճշմարտութիւնը ըսելու, եթէ մինչև իսկ քեզի
աննպաստ ըլլայ:

Ինքինքիդ մեծ հովեր տալ այնքան ծիծաղելի պիտի ըլլար, որքան եթէ
պարծենայիր թէ երկու մէթք հասակ ունիս:

Մի վախնար պաշտպանելու բարեկամ մը որ դուն զայն կը ճաճնաս իրը
ուղղամիտ և լաւ մարդ, մինչեւ իսկ եթէ ամէնքը իրեն հակառակ ըլլան: Ապե-
րախտութիւնը ամենամեծ յանցանքներէն մին է:

Ընելիքիդ վրայ մի պարծենար, կրնայ ըլլալ որ չյաջողիս և ծիծաղելի կը
դառնաս, մինչև իսկ քու ըրածիդ վրայ մի պարծենար, պարծենկոտը վստահու-
թիւն չի ներշնչեր ուրիշներուն:

Յոյսդ բնաւ ուրիշին վրայ մի դներ, վստահէ քու կարողութեանդ վրայ,
ամէնամեղ վայրկեաններուդ իսկ պէտք չէ յուսահատիս, համբերութիւն, կամք,
աշխատախիրութիւն և յարատեւութիւն միշտ յաղթող եղած են: Եթէ ձեռնար-
կած գործդ անյաջող կ'երթայ, մի թուլնար, լաւ խորհէ և այնպէս մը պատրաս-
տուէ որ առիթը ներկայանալուն օդարակամարտ այսպէսով է որ միշտ պիտի կարե-
նաս յաջողիլ:



Ազգային Սկաուտ - Պետ
ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ

322-116

ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆԸ ՍՓՈՐ Է ԹԷ ՈՉ

Այս հարցումը որ ըրած է ֆրանսական թերթ ճը, և որուն բաղմաթիւ պատասխանողներ եղած են: Ոմանք լակոնական ոճով ըրած են ԱՅՈ. ուրիշներ դարձղարցիկ պատասխաններով նախամեծար համարած են խուսափիլ. խկ ճէկ մասն ալ, ՈՉ պատասխանը տռած են:

Առնցմէ բնական է ամէնէն կարեւորը, բուն խկ սկառուտթեան հիմնաղիր Պէտըն Բառըի պատասխանն է, որ իբրեւ ամէնէն յատկանշականը ստորեւ կ'արտասպենք:

«Այո՛, սկառուտիզմը խանդավառող սփոր մըն է, որ պատանիին մէջ կը զարգացնէ կորովը, նկունութիւնը, ուժը եւ ոգեւորութիւնը, հասցնելով զայն այսպէս սկառուտիզմի մէկ ուրիշ նպատակին, այսինքն պատրաստել արի մարդիկ:

Ան, իր մէջ պարունակելով մէկանդ սփորի բոլոր տեսակները, անոնց վրայ կ'աւելցնէ «հաճոյալի խաղ»ի առաւելութիւնը:


Այս առթիւ նոյն թերթը կը լիշէ նաեւ որիշ պատասխան ճը, Անգլիոյ գահաժառանդիշանին Ճէմպորիի բացման ճառը, որ կ'արժէ մասնաւրապէս նկատի ունենալ:

Եշաւասիկ Կալէսի Իշխանին բուն խօսքերը:

«Իր կարծեմ որ սկառուտթիւնը կ'ըստեծէ Ճշմարխ մարզական ողին: Բայց «Ճարզական ողի» բացարութիւնը շատ զրդուար է սահմանելը: Իր վրայ վատահութիւն ունենալ, սակայն ցոցց տալ նաեւ խճական ողի, կը նշանակէ խաղալ իր պատկանած խումբին եւ ոչ թէ իրեն համար, զիտնալ շահիլ առանց ցացածոլութեան եւ կորսնցնել առանց սրտնեղութեան: Ունենալ ուղիղ վարձունքներ: Այս բոլորը խոչականութիւն և ներողամուռթիւն կ'ենթալլիքն ուրիշներու նկատմամբ: Կը նշանակեն ըլլալ օրինապահ, և պատրաստ ձառայութիւն մատուցանելու: Մարզական ողին միայն ճէկ քան կ'առէ. եսասիրութիւնը:

«Եթէ անզլիացիները ծիշտ հաւատք ունեցած են խաղերուն վրայ, պատճառն այն է որ անոնք խաղերը կը նկատեն Ճշմարխ մարզական ողին բաջակերպ ծիշոց ճը, որ կը միացնէ անհատները հասարակաց շահու ճը համար, դուրս ճգելով եսասիրութիւնը:

«Եւ մենք սկառուտութեան վրայ հաւատք ունինք, որովհետեւ ան կ'իրականացնէ այս բոլորը»:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԳԱՅԼԻԿԻ ՎԱՐԻՉՆԵՐՈՒՆ

Ինչպէս ասկէ առաջ ըսած էի, մեր նպատակը գայլիկներու շարժումը ձեռք առնելով, վարիչներու և գայլիկներու հաճելի զբոսանք ճը հայթայթել չէ՝ այլ պատրաստել սկառուտներ:

Օտար աղքեր որ երկար տարիներէ ի վեր ունինց կառավարութիւնը, կրթական նախարարութիւնները, մանկավարժական ճէմպուններով գալրոցները, եւ ամէն տեսակ կրթական դիւրութիւններ, այս վերջին տար տարիներու ընթացքին պէտք տեսան, ընդգրկել, Սըր Պէտըն Բառըի գայլիկներու ճէմպուը, եւ նոյնիսկ վինըը վարձարեցին 1929ի Ճէմպորիին ճէջ Լօրտի տիտղոսով: Մենք որ տարիներէ ի վեր կ'առողինք առանց հայրենիքի, առանց կառավարութեան եւ առանց կրթական որոշ ծրագրի ճը, ձուլուելու, օտարանալու վատանը կը սպառնայ մեր նոր սերմողին. ուրեմն ձեռք ձեռքի տռած պիտի փրկենք մեր պատանի եղբայրները, հաճելի ձեւերով սորվեցնելով անոնց մեր աղդ. պատճութիւնը, աշխարհագրութիւնը, լեզուն եւ վերջապէս ծիչոցը ապագայ հայ բաղաբացիները ըլլալու: Ուրեմն, ապագայ հայութեան փրկութեան լաւագոյն ծիչոցներէն մին է ոկսիլ գայլիկներու կազմակերպութեան, առանց դանոնք զնելու խրթին հարցերու առ-

չեւ, սրովհետեւ տակաւին շատ մատաղ է, ա-
նոնց ուզեղը, այլ միմիայն պիտի պատրաս-
տենք զանոնք խաղերով, երգերով ու պատ-
ճռթիւններով, — այս շարժումը սկառափակ-
մին նախապատրաստական վարժարանն է.
այս ըսելով չեմ ուզեր ըսել որ զայլիկները
սկառափակեն բոլորովին զատ պիտի մնան,
ոչ, արշաներ, հանդէսներ եւ նոյնիսկ պըլ-
տիկ բանակումներ միասին տեղի պիտի ու-
նենան եւ այսպէսով արդէն մեծերը պղտիկ-
ներու օրինակ պիտի հանդիսանան:

Մեր նախատակը պիտի ըլլայ կրթել զայ-
լիկները ոչ միայն մակերեւութապէս, այլ նաև
ներքնապէս, այսինքն հոգիով, նկարագիրով,
և այնպիսի խաղերով որ պղտիկներուն հա-
ծելի գոլէ զատ, սրովեցնէ անոնց իրենց
ազգութիւնը եւ լեզուն, պատրաստէ զանոնք
բարոյապէս և ֆիլիքապէս, — այս ամէնքը
ինչպէս ըսի, միշտ աղոց հաճելի խաղերով, որ
սիրով չետեւին այս շարժումին, ըլլալով ուշիմ
ու աշխայդ:

Քիչ վերը ըսի որ կրթենք պատանիները
ոչ միայն տեսրով, այլ նաև հոգով. հոս
օրինակ մը պիտի տաճ այդ մասին. ենթադ-
րեցէք ձեր առջեւ զինուորական սիրուն վաշտ
մը, որ ըլլայ մաքուր հագուած, փայլուն կո-
ճակներ և կօշիկներ, արդուկուած տափաս,
եւայն, և որ չափազանց սիրուն մարզաքներ
կը կատարեն իրենց սպային առաջնորդու-
թեամբ, մարզանքէն վերջ այդ զինուորներէն
մի քանիին հետ բարեկամացէք իրենց պարզ
հագուստներուն տակ, սկսէք ասղիէն անղիէն
խօսակցութեան. եթէ, այդ զինուորները այդ
բարեկամութեան միջոցին ալ ցոց տան
զինուորական կարգապահութիւնը և կրթու-
թիւնը, ըսել է թէ, անոնք ոչ միայն
արտաքինով այլ նաև ներքինով ալ մարզուած
են, և շնորհաւորութեան արժանի է զանոնք
պատրաստող վարիչը, ուստի սիրելի վարիչներ,
նմանեցէք այդ սպային, պատրաստելով ձեր
զայլիկները թէ արտաքինով եւ թէ ներքնա-
պէս: Սակայն հոս զինուորական օրինակ մը
բերելուս համար ըլլայ որ կարծէք թէ զինուո-
րական ողի պէտք է տաք զայլիկներուն, ոչ

անոնց պիտի սրովեցնէք միայն «խաղեր, եր-
գեր և պատճռութիւն»:

Lord Morley կ'ըսէ այս առթիւ.—

«Ռւզզակի կերպավ շինուած բարոյականը
ոչինչ կ'արժէ, պէտք է շինել զայն անուղ-
ղակի կերպավ, այսինքն երգերով, խա-
ղերով ու աղնիս անակնկալներով. այսպէս
աւելի հաստատուն կերպավ կը տպաւորուին
անոնք սորվողներու ուղեղին մէջ»:

Գրել կարգավ ու հաշուելը բաւական չէ,
պէտք է նաև տղոց մէջ բնական ձիրքերը,
բնական կարողութիւնները արթնցնել, նկա-
րագիրը շինել, ոչ թէ ձանձրացուցիչ կեր-
պավ զլախնին ուռեցնելով, այլ ՄՌՑՈՒՄՆԵ-
ՐՈՎ. և ԽԵՂԵՐՈՎ:

Ալֆորդիլի խմբապետ (Փ. Մ.)
ԹԵՇՔԵՐԸՆԿԵՐՆ ԵՂՋԵՐՈՒ

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ՀԱԳՈՒՍՑՆԵՐՈՒ ՓՈԹՈԲԻՒԿ

(8 - 10 կամ աւելի թիունվ տղաքներ)

Առաջնորդովը կը հաւաքէ տղաքը խաղա-
վայրը, 5 մէթը շրջագիծով շրջանակի մը վր-
րայ, տղաքը իրենց շապիկը եւ կօշիկները կը
հանեն՝ իրարու վրայ կը զիզեն շրջանակին
կեղրոնը և իրարմէ հաւասար բացուածքով
կը նստին շրջագիծին վրայ:

Առաջնորդին սուլիչի մէկ նշանին վրայ
ամէնքը մէկ կը վազեն զէպի հարուստներու
դէղը: Ամէն տղայ կը ջանայ վայրկեան մը
առաջ զտնել իր հագուստը և հագուիլ ու
ներկայանալ առաջնորդին: Այս առթիւ տղա-
քը, երկու տեսակ աշխատաւթիւն ունին, նախ
վայրկեան մը առաջ հագուիլ, երկրորդ՝ ար-
գելք ըլլալ ուրիշին հագուելուն: Ոչ ոք իրա-
ւոնք ունի ձեռքը անցած հագուստը պա-
հել եթէ իրը չէ, այլ պէտք է զայն ցիր
ու ցան նետէ զէպի խաղավայրին մէյ մէկ
կողմը: Իրապէս շատ զուարթ պատկեր մը կը
պարզուի երբ հագուստները կը սկսին օղին
մէջ աջ ու ձախ թուչի՝ իրական փոթորիկի
մը պէս և տղաք ստիպուած կ'ըլլան աջ ու
ձախ վաղել իրենց հագուստը ձեռք անցնելու

և հազուելու համար: Ամէի անգամ որ իրենց փնտռածը չեն գտներ, դժոխալով մաս մըն ալ իրենք անդին կը նետին ձեռքերնին անցած շապիկը կամ կօշիկը:

Այս խաղը, ամառը գաշտի մէջ, իսկ ձըմեռը սրահի մէջ կարելի է խաղալ:

ՀՈՏԸՆԹԻԹԻՒՆ

Աննեակի մը մէջ ոեւէ անվնաս և զօրաւոր հոտով թաշկինակ մը կը թրջուի և կը պահուի ոեւէ տեղ մը: 6—8 սկառատներ աչքերնին կապած՝ հոտառութեան զօրութիւնովը միայն կ'աշխատին թաշկինակը դանել: Խաղը կը շահի այն որ առաջին անգամ կը դանէ թաշկինակը:

ԳԵՏՆԱՄԻՆՉԱՐԱՐՇԵՍԻ ԽՄԲԱՑՆԵՐՈՒԻ ՄԻՋՅԻ

Խւրաբանչիւր խճբակի սկառաւ ձեռքն ունի պատառաբաղ, մը և իրարմէ 50 ական մէթր հեռու կեցած են: Խճբակներու Ա. սկառատները մէջ մէկ գետնախնձոր անցուցած իրենց պատառաբաղին վրայ կը վազեն 40 մէթր, և 10 մէթր մնացած միւս սկառատին կը նետին գետնախնձորը: Բ. սկառաւը կը ջանայ իր պատառաբաղովը օդին մէջէն բռնել գետնախնձորը. եթէ յաջողի կը վաղէ 40 մէթր գետի Գ. սկառաւը, և այսպէս շարունակաբար: Իսկ եթէ չի յաջողի, գետնախնձորը կը վերադարձնէ Ա. սկառատին նետելով, որ գարձեալ իրեն կը նետէ պատառաբաղով: Անհրաժեշտ է պահեստի գետնախնձորներ ունենալ այս խաղին համար:

ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԻՒ ՀԱՅ ՍԿԱՌԻՑԻ ՄՐ

Աւոթըթառնի, իստ ձիւնիը սրահին մէջ, Դեկտ. 11 ի իրիկունը, տեղույն սկառատներու վարչութիւնը, պատշաճ հանդիսաւորութիւններով և պատիւններով, «Արծիւ Սկառատներ»ու նշանակը յանձնեց Գառնիկ Թովմանեանի: Ասիկա բարձրագոյն պատիւ մըն է որ կը ստանայ սկառաւ մը, ինչպէս կը զրեն Պոսթոնի ամերիկեան թերթերը: Գառնիկ Թովմանեան կը ճանցուի իբրեւ տիպար սկառաւ մը, ինչպէս կը զրէ Աւոթըթառնի Արն թերթը եւս: Աւոթըթառնի Պատոյ Ասեանը յանձնարարած է Գառնիկ Թովմանեանը իր այժմու բարձր զիրքին և Ամերիկեան Ազգային Պատոյ Ասեանն ալ ընդունած է զայն:



գայլիկին անկինը

ԻՆՉՊԵՍ ՍԿԱՌԻՏ ԵՂԱՅ

Ի տես մեր տան մօտիկ դաշտին մէջ, բանակումի պատրաստութիւններով զբաղող այդ 50ի մօտ սկառատներուն շինարար աշխատանքին, Պօղոսիկը ու ես բերանքաց մնացած էինք: Ալ զրեթէ ճաշի ժամն անզամ կը մոռնայինք, ու քայլ առ քայլ կը հետեւէինք սկառատներու շարժումներուն: Մեր մատադ ուղեղները սկսան պաշար հաւաքել և զաղափար կազմել սկառատական կեանքին վրայ: Բոլոր սկառատները կը զուրգուրային մեր երկու փոքրիկներուս վրայ և սիրով կը պատասխանէին մեր հետաքրքիր հարցումներուն: Այս մէկ ամիսը որ անցուցինք սկառատներուն հետ մեզի դրախտի կեանք եղաւ: Ծնողքնիր տեսնելով սկառատութեան մեր վրայ զործած բարերար ազդեցութիւնը, ոչ թէ արգելք չէին ըլլար, այլ կը քաջալերէին մեզ:

Մերդք որ տարիքնիս չէր ներեր անմիջապէս սկառատ արձանագրուելու:

Վերջապէս ամսուան մը ընթացքին, հոտ սովորեցանք բանջարեղէն ստկել, վայտ կոտրել, վրան կանգնել, բարեւի կենալ, սկառատին դաւանանքը զոց արտասանել, ջուր եռացնել, կրակ վառել, հանգոյցներ կապել, և ուրիշներուն օգնել: Մենք որ առաջ զաւաթ մը չէինք ուզեր տեղափոխել մայրիկին օգնելու համար, հիմա միակ փափաք մը ունէինք, այն է բարի զործ մը ընել:

Մեր ծնողքը կ'օրհնէին սկառատութիւնը հիմնողները, և կը խայտային մեր վրայ կատարուած փոփոխութիւնը տեսնելով: Հայրս որ սկառատներու խմբապետին հետ տեսակցած էր, ամէն անզամ որ ծառայութիւն մը ունենար ինձմէ խնդրելիք, սկառատական բարի զործ մը կը կոչէր զայն: Իսկ ևս հնազանդ,

յանուն սկառտութեան ամէն ինչ ընկելու պատրաստ էի:

Չեմ ուզեր հոս պատմել թէ ի՞նչ տխուր օր մը եղաւ մեզ համար երբ սկառտները մեկնեցան բանակումէն: Մենք այդ օրը ամէն ջանք ի զործ դրինք օգնելու համար անոնց իրենց ժողուրտուքը ընելու, Աւ երբ մեկնեցան, օրերով անոնց բանակումի թափուր դաշտը կ'այցելէինք և երեւակայութեամբ կը տեսնէինք անոնց եռուզեն աշխատանքը:

Երբ տուն վերադարձանք միակ սիրած խաղերնիս էր սկառտական խաղը: Պարտէզին մէջ հին սաւանով մը վրան կը կանդնէինք, դաւազաններ ձեռքերնիս պահակ կը սպասէինք, սուլիչի նշաններ կուտայինք, կրակ կը վառէինք և կերակուր եփելու փորձեր կ'ընէինք:

Գտած էինք նաեւ հինգ փոքրիկներ մեր թաղէն և անոնց կը սովորեցնէինք սկառտութիւնը: Անոնք մեր յաւելեալ և ճոխացեալ տեղեկութիւնները լսելով բերանը աց կ'ապէէին: Պօղոսիկը ստանձնեց խմբապետի պաշտօնը, իսկ ես առաջնորդ եղայ:

(Նարունակելի 3)

Խնդապնդ

ՀՈՅ ՍԿԱՌԻ ՄՐ ՎԱՐԶԱՏՐՈՒԹԻՒՆԻ

Էմերիկայի սկառտներու Պատույ Ազգականը՝ բոլոր սկառտներու մէջէն 52 հոդի ընտրած է իրեւ 1929 ի համար ձրիավարծ աշակերտ ասոնցձէ մէկն է 17 տարեկան Արայ Աւագեան Ֆերէզնոյէն, որ ուսանող մըն է Պոսթմանի արշեստավիական վարժարանը:

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԻ կախում ունի ծեր անձնական արժանիքէն, զոր կրնաք կը կնապատկել, տամապատկել, կը թելով ու զարգացնելով ծեր մէջ քնացոլ ժառանգական յատկութիւնները:

Ճիւա՞նդ էք, անքա՞խտ էք, այդ կը նշանակէ թէ ծեր Ֆիզիքական եւ բարոյական կեանքը գէշ ծեւ առած է: Բարեփոխեցէք ծեր ապրելակերպը եւ վերստին հիմնովին կը թեցէք ծեր Ֆիզիքական ու հոգեկանը:

ՏՈՓԹ. Վ. ՓՈՆԴ:

«Երջանկութեան Աւղին»



ՍԿԱՌԻ ՏԱԿԱՆ ՎԱՐԶԱՏՐՈՒՄԸՆ

ՓՐԱՆՍԱ

ՓԱՐԻԶ

ՍԿԱՌԻ ՏԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Յունուարի սկիզբէն, սկսած են սկառտական գիշերային դասախոսութիւնները, Ազգային Սկառտ - Պետ՝ Պ. Գրիգոր Յակոբեանի կողմէ:

Կը հետեւին խմբապետներ, փոխխմբապետներ և առաջնորդներ, ընդամէնը 17 հոգի, Փարիզէն և շրջականերէն: Մինչև այսօր 6 դասախոսութիւններ տեղի ունեցան:

Սոյն դասախոսութիւններուն մաս պիտի կազմեն առողջապահական և բժշկ գիտելիքներ որ սիրով ստանձնած է Տոքթ. Մ. Նորայր:

Դասախոսութիւնները պիտի շարունակուին ձմռան ընթացքին:

Այս դասախոսութիւններուն մաս կը կազմեն կիրակնօրեայ արշաւները: Արոշուած է, ամսոյ Ա. կիրակին ազատ ձգել, Բ. կիրակի՝ ընդհ. խումբերու արշաւ, Գ. կիրակի խմբակային արշաւներ, իսկ Դ. կիրակին խմբային արշաւներու յատկացնել:

Պ. Գ. Յակոբեան, զատէն կազմակերպած է աղջիկ սկառտաներու զործը և յանձնած է զայն Օր. Բնքապահեանի, որ ամէն յարմարութիւն ունի զործը լաւ կերպով յառաջ տանելու: Մտադրութիւն կայ Գայլիկներու կազմակերպութիւնն ալ յանձնել յիշեալ օրիորդին:

Վերոյիշեալ բոլոր դասախոսութիւնները խմբատիպ արտազրելով կը դրակուին մասնածիւղերուն և շրջաններուն:

Բոլոր շրջաններու կը յանձնարարուի

ստանալու համար դիմել Փարիզի Շըր-
ջանային Վարչութեան հասցէին՝

U. G. Arménienne de C. P. et de Scoutisme,
1, Rue Saulnier, Paris (9^e) ԱԿԱՊԻՏԱԿԱՆ
ՄԱՐՄԻՆԻ բն:

ԱՐԴԱՒ

Յունուար 12, կիրակի առավոտուն շատ սի-
րուն օդով մը Փարիզի և ն Երջանի սկսուստ-
կան խումբերը կանուխէն ոռքի էին Ազգային
Սկաուտ-Պետին իրահանգին համաձայն.—

Այդ կիրակին Բնդհ. Արշաւի կիրա-
կին էր:

Gare du Nord էն, Gare de l'Est էն և
Gare St. Lazare էն խումբ խումբ հայ
սկաուտներ կայարաններէն զուրս զա-
լով սուզակներու նման կ'իջնէին Փարիզի
գետնայարկը (մէթրօ), Gare de Lyon էն
զուրս զալու և կրկին շոգեկառքով Ալ-
ֆորվիլ իջնելու համար: Շոգեկառքին
մէջ ողեւորսութիւնը կատարեալ էր: Տը-
զաքը սկաուտական և ազգային երգե-
րով կեանք կը սփոէին իրենց շուրջը:

Երբ կառախումբէն իջանք, մեղ սպա-
սող չկար սակայն, մեր սկաուտական
ակնարկները հանդիպեցան հետախու-
զական նշանի մը և յաջորդ փողոցի ան-
կիւնն ալ նամակի նշան մը անմիջապէս
զտանք, նամակը որուն մէջ մեր հե-
տեւելիք ճամբան քարտէսով և զրաւոր
բացատրուած ըլլալէն զատ, տեղույն
հայ սկաուտները ներողութիւն խնդրած
էին մեղ չկարենալ դիմաւորելնուն հա-
մար, որովհետեւ արշաւատեղիին զար-
դարանքով և խումբերու տեղերու պատ-
րաստութեամբ զբաղած էին: Ասկէ զատ,
յետզրութեամբ մը մեղ կ'իմացնէին որ,
տեղույն Քաղաքապետութեան պաշ-
տօնները հրահանգ ստացած էին, ձեր-
բակալի առանց սանձի կենդանիները,
ուստի՝ խորհուրդ կուտային փոխ-խըմ-
բապետներուն որ մեր բոլոր թօթեմա-
ւորներուն «էշ»ուն, «շատակեր» հնդկա-
հաւորին և «անփետուր սագին» վզերէն
մէկ-մէկ կապ անցնեն և այդպէս ըե-
րեն արշաւատեղին, ապա թէ ոչ ձեր-
բակալուելու վտանգին կ'ենթարկուին:
Վերջապէս առանց վտանգի կը համարք

որոշուած տեղը ուր՝ Ալֆորվիլի յիսուն
սկաուտ և գայլիկները, մեղ կը հիւրա-
սիրեն սկաուտական բացադանչութիւ-
նով և մեր տեղերը ցոյց կուտան, շու-
տով կը տեղաւորուինք և ահա շեփորը՝
մեղ կ'իմացնէր Ազգ. Սկաուտ-Պետին
զալը, (ականջը խօսի Բերա-Եիշլիի խըմ-
բապետ Պ. Օ. Ֆրէնկեանին, որ փոխա-
նակ փողը ըսելու խողովակը հնչեցուր
կ'ըսէր), բոլոր խումբերը շարքի են պայ-
տի ձեւով, ի՞նչ սիրուն տեսարան: Վեց
խումբեր և գայլիկներն ալ կեղրոնք,
կաղմու պատրաստ կը սպասեն...

Ուշադրութիւն. Պատրաստ.

Ազգ. Սկաուտ-Պետը, Պատուի՛ առ
խումբէ խումբ կ'արձագանգէ այս հրա-
մանը, իսկ գայլիկները երկու փոքրիկ
մատներով, բարեւի կեցած իրենց Ա-
քիլլան կը թնդացնէին: Հայ Սկաուտ-
Պետը, բալոր խումբերը աչքէ կ'անցնէ և
ընդհանուրին ուղղելով իր խօսքը, կը տ-
րուկ խօսքերով սկաուտիզմին, ան-
զուգական Հայաստանի և անոր զեղեց-
կութիւններուն մասին կը խօսի խան-
դավառելով տղաքը: Ցետոյ օրուան հրա-
մանդները տալով խմբապետներուն, կը
հսկէ ատոնց գործադրութեան, որոնք
շատ կանոնաւոր կ'անցնին:

Կէս օր է, երկինքը սկսած է մթա-
զնիւ: ճաշի փողը կը հնչէ և խմբակները
իրեց առաջնորդներուն շուրջ հաւաքուած
կը ճաշեն: Խմբապետները կը հիւրասի-
րեն իրենց Պետը՝ իրենց սեղանին «թա-
մատա» ընտրելով: Ամէն կողմ ոգեւու-
րութիւն և մեծ ախորժակ, «Շատակեր
հնդկահաւը զործի վրայ է, բազուկները
վեր սոթտած կը լափէ, և աչքին ծայ-
րովը՝ պետին պնակը կը քննէ սպասե-
լով յարմար առիթին յարձակում զոր-
ծելու համար....

Ճաշը աւաբտած է, մէկ ժամ բացար-
ձակ հանդիսաւ: Եւ ահա՝ տեղատարափը
կը սկսի: Հաւաքում և մեկնում, տասը
վայրկեանէն տասնեակ մը վրանները
քակուած, ծալլուած են արդէն:

Եւ ահա՝ կը մեկնինք դէպի Ալֆոր-
վիլի Սկաուտներուն Ակումբը: Ակումբին
մէջ շարժելու տեղ չկայ, երդ, իուլա՝,

պում, չօմօլիքա եւն։ Վերջապէս Պետք
կը սկսի դասախոսութեան։ Ժամը 4ին,
կ'աւարտէ, որմէ ետքը հիւրերը հրա-
ժեշտ առնելով իրենց տեղացի եղբայր-
ներէն, կը մեկնին կայարան։ Կառա-
խումբը ծուխ ու մուխ փչելէն սրբնթաց
կը հեռանայ, իր ետին թողլով այդ օր-
ուան սկառտական սիր'ն, ազնի՛ւ ու
կրթիչ ժամերը։

Ժ. Մ.

ԾՆՈՒՆԴԻ ԾԱՌԸ

Հ. Մ. Բ. Մ.ի Անկիէնի Մասնաճիւղը
Ծնունդի Ծառ մը սարքած էր Խթման
երեկոյին, իր գալիիկ, սկառւտ և աղջիկ
սկառտներուն համար, հրաւիրելով այս
առթիւ բոլոր ոչ սկառւտ զաւակ ու-
նեցող ծնողքները։

Պ. Մալումեան կարճ խօսքերով բա-
ցարեց Հ. Մ. Բ. Մ.ի նպատակը և հրա-
ւիրեց ծնողքները վստահիլ իրենց մա-
նուկները նոյն Միութեան, եթէ կ'ուզեն
զանոնք փրկել խաթարիչ վայրերու
մթնոլորտէն, և այսպէսով սատարել
պատրաստութեանը ֆիզիքապէս առողջ,
բարոյապէս մաքուր անհատներու։

Յետոյ Մասնաճիւղին գայլիկները ի-
րենց մայրենի լեզուով արտասանու-
թիւններ ըրին, հրճուեցնելով ծնողքնե-
րու սրտերը, և ուրախութեան արցունք-
ներ խլելով անոնց աչքերէն։

Մասնաճիւղը աւանդական «Կաղանդ
պապայի» միջոցաւ նուէրներ բաշխեց
բոլոր պատիկներուն։ Իսկ սկառւտ և
զայլիկները նուէր մը տուին իրենց խըմ-
րապետ Պ. Սերոբեանի, որուն անխոնջ
ջանքերուն շատ բան կը պարտի Մաս-
նաճիւղը։

Ներկաներէն շատեր նուէրներ ըրին
և 20 է աւելի՝ անձեր Պատուոյ Անդամ
արձանագրուեցան Հ. Մ. Բ. Մ.ի։

ՅՈՒՆԱՍԱՆ

ՆՈՐ ԵՐՁԱՆ 1929 - 1930

Սկառտական գործունէութեան մեծ
մղում պիտի տրուի 1930 էն սկսեալ։
Առաջին առթիւ տեղի պիտի ունենան
սկառտական քննութիւնները և աստի-
ճաններու բաշխումը։ Գարնան պիտի
սարքուի Յունահայ Սկառտական Բնդհ։
Բանակում մը։

Սկառտական խումբերը վերակադ-
մելու պաշտօն տրուեցաւ Պ. Գայեանի,
իսկ սկառտական ընդհ. քննիչ նշա-
նակուեցաւ Պ. Սարգիսեան։

Ցունաստանի Բրլիփի Տնօրէն՝ Պ. Ջրբարը,
գնահատելով Հ. Մ. Բ. Մ.ի գործունէութիւնը,
նուիրած է 100 տոլար և խոստացած է 30,000
տրախմի վճարել սկառտներու գործին համար
մինչեւ Ցունիսի վերջը։ Առաջին բաժինը 5000
տրախմին յանձնած է Գանձապետին։

ՌՈՒՄԱՆԻԱ

ՔՅՆՍԹԱՆՑԱ, Դեկտեմ. 1929.— Հայ
լիկուտը, մեր սկառտներու մէջ ար-
թընցուց կատարեալ հետաքրքրու-
թիւն մը։

Քօնսթանցայի Հ. Մ. Բ. Մ.ի Մասնա-
ճիւղը վեց տարուայ կեանք մը ունի
1923 էն ի վեր Անկէ առաջ սակայն այս
փոքր գաղութին մէջ գտնուած են զա-
նազան անուններով մէկէ աւելի Մար-
զական Միութիւններ, որոնք յետոյ
միասնարար ձուլուած են Հ. Մ. Բ. Մ.ի
մէջ։ Իսկ սկառտական կազմակերպու-
թիւնը սկսած է 1923 էն ի վեր, որմէ
յետոյ տարուէ տարի աւելի լուրջ հան-
գամանք մը ստացած է։ Այսօր ունինք
մօտ 30 սկառտներ, որոնցմէ 6ը գայ-
լիկներ։

Զափազանց գժուար պայմաններու մէջ
մեր սկառտները կրցած ենք կազմա-
կերպել, և եթէ այսօր չենք կրցած ա-
նոնց թիւը 30ը անցնել պատճառը մեզ-
մէ դուրս է։

Չմեռնային եղանակը արդէն սկսած
է ու մեր գործունէութիւնը կը կայանայ
շարաթական հաւաքումներով մեր սկա-
ռտները պատրաստել Բ. կարգի քննու-
թեան։ Ասկէ զատ որպէսզի հաւաքոյթ-
ներուն տանք աւելի հրապուրիչ տեսք



մը միշտ զանոնք կը համեմենք հետաքրքիր խաղերով, զանազան պատմութիւններով, քիչ մը նուազ, եւյլն. այնպէս որ մեր սկառատները սկսած են իրապէս համ առնել հաւաքոյթներէն ուր գրեթէ ստիպումով կը բերէինք զիրենք:

Ինչպէս որ ըսինք, Հայ Սկառատը կատարեալ հետաքրքրութիւն մը ստեղծեց մեր սկառատներու մէջ, և նոյն իսկ դայլիկները որոնք հազիւ կրնան կարդալ, սկսան կամաց կամաց հեղել իրենց բաժինը: Ամոնցմէ մին Բ. թիւին մէջ տեսնալով «Միշտ դէպի լաւ» գայլիկին երդը, խնդրեց որ զանիկա իրեն սովորեցնենք. պիտի խնդրենք որ բարի ըւլայիք առյն երդին եղանակը կարելի եղածին չափ շուտ մեղ ուղարկել, չափազանց ուրախ պիտի ըլլանք:

Չմեռնային հաւաքոյթները աւելի հետաքրքրաշարժ զարձնելու համար, արդեօք կրնա՞ք մեղ թելազրութիւններ ընել, միեւնոյն ժամանակ սենեակի խաղերու քանի մը տեսակներ տեղեկացնելով մեզ:

Կ. ՑԱԿՈԲԵԱՆ

ՍՈՒՐԻԱ - ԼԻԲԱՆԱՆ



Գամասկսի Հ. Մ. Բ. Մ.ի սկառատները, արարական «Դութա» խմբի սկառատներուն հետ դէպի Մաարապա գիւղը, արշափ միջոցին:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊՈՒՐԿԱՁ

Հ. Մ. Բ. Մ.ի 80նը ՊՈՒՐԿԱՁԻ ՄԷՋ

Հ. Մ. Բ. Մ.ի Տօնին առթիւ տեղւոյս Մասնաճիւղը կազմակերպած էր Գրական - Մարզական երեկոյթ մը, որ տեղի ունեցաւ ամսոյս 8ին, Բանուորներու սրանին մէջ:

Երեկոյթը բացուեցաւ Միութեան անդամներուն կողմէ երգուած «Յառաջ հայատակ»ով, զոր յոտնկայս ունկնդրեցին ներկաները:

Յետոյ մէջընդ մէջ եղան արտասանութիւններ, զուարձախօսութիւններ և սկառատներու ու գայլիկներու կողմէ չափական մարզանքի փորձեր, որոնք բոլորն ալ ծափերով ողջ ունուեցան:

Կարճ դագարէ մը յետոյ, բեմադրուեցաւ Բ. Ժապունիի Պաշտօնս խումբալ է քրքջալիր կատակերգութիւնը, որ կուշտու կուռ խնդուք պատճառեց ամէնուն: Մեր անդամներէն, Ա. Յակոբեան շատ յաջող կերպով կատարեց զինուոր Լինտորի գերը:

Այս ծիծաղաշարժ զաւեշտէն վերջ, սկսան զուարձութիւնները, որոնք մինչեւ ուշ զիշեր տեսեցին:

Պարերու ընթացքին աճուրդի դրուեցաւ սիրուն բարձ մը, որմէ կոկիկ զումար մը զոյացաւ:

Տեղւոյս Մասնաճիւղը, որու մասին ձանօթովթիւններ տուած էի Հայ Սկառատի մէջ, Յունուարին սարքեց խնամքով պատրաստուած զուտ սկառատական ցերեկոյթ մը, որ ունէր այլազան և հաճելի նիւթերով յայտազիր մը:

Ուրախալի է որ, ինչպէս միշտ, այս անդամ եւս, տեղւյս հայ հասարակութիւնը խուռներամ փութացած էր, նիւթապէս թէ բարոյապէս քաջալերելու Հ. Մ. Բ. Մ.ի այս ձեռնարկը և վայելելու՝ հայ արիներու կողմէ պատրաստուած այս սիրուն ցերեկոյթը:

Բեմին երկու կողմերը կը բորձանային երկու մեծաղիր նկարներ, որոնցմէ մին կը ներկայացնէր՝ խարխուլ պատռանզան մը, վրան ունենալով փողոցա-

յին տղայ մը, ձեռքերը զրապանը և սիկարը բերանը, պատուանդանին վրայ գրուած էր . — Ստութիւն, նենգութիւն, վատութիւն, եւյլն . . իսկ միւսը՝ կը ներկայացներ ամուր պատուանդան մը, ուրու վրայ կանգնած էր առոյդ ու յաղթակազմ սկառւա մը, ժպիտը գէմքին, այս պատուանդանին վրայ ալ զրուած էր . — ձշմարտութիւն, պատիւ, իաւատարմութիւն, եւյլն . . Բեմին վրան ալ կար կաչ մը՝ ուղղուած հայ մայրերուն: Այս գծապրութիւնները գեղեցիկ էին և պատրաստուած՝ պատաճի սկառւաններու կողմէ:

Ցերեկոյթը բացուեցաւ «Հայ Արին» սկառւական խմբերգով: Որմէ յետոյ կարգաւ տեղի ունեցան յայտագրին միւս թիւերը:

Փոքրիկ ու վառվուն գայլիկներու կողմէ երգուեցաւ Հայ Սկառւատի մէջ երեւցած «Միշտ գէպի լաւ» գայլիկներու երգը և կազմուեցան ու կատարուեցան բուրգի և մարզանքի գեղեցիկ ձեւեր, որոնք խանդավառեցին հանդիսականները, չերմ ծափեր խլելով:

Սկառւաններու կողմէ ալ տեղի ունեցան բուրգի և մարզանքի զրաւիչ փորձեր, որոնք եւս ծափերով գնահատուեցան:

Մէջընդ մէջ տեղի ունեցան նաև հայերէն և պուլկարական հայրենաշունչ արտասանութիւններ:

Միջնարարներուն սկառւաններու կողմէ կատարուեցաւ վիճակահանութիւն մը որ լաւ ընդունելութիւն զտաւ:

Այս բոլորէն վերջ, ներկայացուեցաւ սկառւական կեանքէ կենդանի պատկեր մը՝ «Կրակի Շուրջ», որ տպաւորիչ և խօրհրդաւոր անցաւ: Այս առթիւ, վրաններու մօտ, կրակին շուրջ բոլորուած սկառւաններու կողմէ տեղի ունեցան արտասանութիւններ, զուարծախօսութիւններ և երգ ու Պէնկալեան լոյսերու մէջ՝ հայկական պարեր, որոնք մէծ ովեւութիւն ստեղծեցին:

Ներկանները վարելելէ յետոյ հայ սկառւական այս ցերեկոյթը զոհ և քաղցր տպաւորութեամբ մեկնեցան որահէն:

ԳրիԳորիկ

Սկառւատ - Առաջնորդ

ԹԱԹԱՐ ՊԱԶԱՐՃԵԳ

... «Հայ Սկառւատ»ի վարչութիւն

... Հայ Սկառւատի բովանդակութիւնը մեզ սկառւաններու համար, հետաքրքրական է և կը ջանամ զայն սկառւատ եղբայրներու մէջ տարածել:

Ես շուրջս կը հաւաքեմ սկառւատ եղբայրներս, անոնց կը կարգամ կարեւոր կէտերը, կը ծանօթացնեմ աշխարհի չորս կողմը ցրուած մեր սկառւատ եղբայրներուն հետեւած ուղին:

Անոնք բոլորն ալ չափազանց ուրախ են և կ'ողջունեն անոր երեւումը ու կը մաղթենք յառաջդիմութիւն:

Մ. ՄԻՆԱՍԵՅԱՆ

Հաճոյքով ստացանք Հայ Սկառւատ թերթը, կատարեալ յաջողութիւն կը մաղթենք:

Հ. Մ. Բ. Մ. ի տեղւոյս Մասնաճիւղը հիմնուած է 1924ին, այդ թուականէն ասդին շատ յառաջդիմած է, մանաւանդ սկառւական կազմը: Ներկայիս իր մէջ կը հաշուէ աւելի քան 40 անդամներ, որուն 20ը սկառւաններ, կանոնաւոր կերպով կը մասնակցին բոլոր սկառւական հաւաքոյթներու:

Այս ամուսն եղանակը արշաւներով և բանակումներով անցուցինք, մէծ ժողովրդականութիւն կը վայելենք հոս:

Քանի մը շաբաթ առաջ հիմնուեցաւ գայլիկներու խումբ մը: Ակսած ենք մասնաւոր դասախոսութեան: Անցեալ ամսուն 27ին սարքեցինք զուտ սկառւական երեկոյթ մը:

Պատրաստուած է ձմեռնային ժամանակացոյց մը, ամէն կիրակի ունինք հաւաքոյթ: Ունինք նաև Սկառւական խորհուրդ, որ շարթու մէջ իր մասնաւոր ժողովները ունի: Յոյսով ենք որ այս եռանդու աշխատանքով աւելի լաւ պատրաստուած պիտի ըլլանք դալ ամառուան եղանակին:

*

Տեղւոյս Սկառւական Խորհուրդը նոր ծարւոյ առթիւ գեղեցիկ զաղափարը յղացած էր փրոփականտի օր յայտարելու:

Նոյն օրը, աղղային վարժարանի սրահին մէջ ճոխ յայտազիրով հանդէս մը սարքուեցաւ սկառւաններուն կողմէ: Վա-

բազոյրը բացուելուն, բեմի վրայ շարուած էին սկառատներ: Հանդէսը սկսաւ Յառաջ Նահատակով: Բազմութիւնը կանուխէն եկած էր: Օրուան տօնին նշանակութիւնը բացատրող կոչերը կը ցըրուէին ժողովրդին մէջ: Տեղի ունեցան արտասանութիւններ երգեր, կենդանի պատկերներ, մենախօսութիւններ:

Հ. Մ. Բ. Մ.ի օժանդակ անդամներուն կողմէ ներկայացուեցաւ դիլումի վաճառականը քոմէտին յաջող կերպով:

Սկառատներու կողմէ պատրաստուած էր Կաղանդի ծառ մը, քաղաքին մէջ առաջին անգամ ըլլալով:

Գեղարուեստական բաժինէն վերջը սկսան զանազան պարեր զինուորական նուազախումբի առաջնորդութեամբ:

Խիստ լաւ տրամադրութիւն մը ստեղծուած էր ներկաներուն մէջ որ չին ուղեր հեռանալ սրահէն:

Ամսոյս 14ին տեղի ունեցաւ վարչութեան հրաւէրով Ընդհանուր ժողով մը, ընտրելու համար նոր Վարչութիւնը: Ընտրուեցան հետեւեալները: —

Պ. Պ. Մինասեան, Արտաշէս Փափազ-

եան, Ազնիւ Ռւզունեան, Օննիկ Միքայէլեան, Ստեփան Պօյաճեան:

Նորընտիր Վարչութիւնը ունեցաւ իր հաւաքատեղին: Նոյն հաւաքատեղիին համար Ֆիլիպէի Մատոնածիւղէն Պ. Ներսէս Աստուածատւրեան ամէն ամիս կը նուիրէ հարիւր լէվա:


Հ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ՊԱՂԵՍԻՆ

ԵՐՈՒՍՈՂԻՄ, Յնկր: — Երուսաղէմցի պատանիներս փափազելովս կառատական շարժում մը յառաջ բերել, սկսանք կանոնները ուսումնասիրել: Սակայն փափաքելով հայկական սկառատական օրէնքները ունենալ, կը խնդրենք որ Հ. Մ. Բ. Մ.ի Կանոնագիրը դրկուի մեղ առաջին առթիւ, որ անմիջապէս զործի ձեռնարկենք և կազմենք մեր սկառատական խումբը:

Հաճեցէք նաեւ Հայ Ակաուտ զրկել մեզ:

Ն. Պէտքիլեան



Միջազգային սկառատները աղօթքի պահուն:

ՄԱՐՄԱԿՐԵԱԼ

ԱԹԼԵԹԻԶՄ

Երիտասարդ մարզիկներ ինտենսալ տողերը մեր մարզիկներուն լուրջ ուշադրութեան կը խնձնենք. Խնդր ըլլալով մեր լաւագոյն մարզիկներէն մին. Ես մանաւանդ սկիզբէն ինտենսած ըլլալով աթլէթիզմի, իր փորձառութիւններէն է որ կը խօսի: Մ. Խ.

Սուանց անդրադառնալու հոս աթլէթիզմի ծագման և անոր օգտակարութեան մասին, որ մեզ շատ պիտի հեռացնէր մեր նիւթէն, անմիջապէս պիտի ըսեմ, որ ան սփորի մէջ նկատուած է ամէնէն օգտակարը, ամէնէն կատարեալը և ամէնէն դեղեցիկը, — մարմենոյ զեղեցկութեան ճարտարապետը, և սա ճշմարտութիւն մըն է աւելի անոնց համար որոնք կանոնաւոր կերպով կը հետեւին այս ճիւղին:

Աւելորդ չըլլար կարծեմ մի քանի թելազրութիւններ ընել անոնց որոնք կը հետեւին աթլէթիք խաղերու, կամ կ'ուզէն սկսիլ մարզական այս բարդ ճիւղով մարզելու իրենց մարմինը: Խնչպէս ամէն օգտակար բան ունի իր լիտասակար կողմերը, այս ճիւղն ալ ունի իր լիտասակար բաժինը երբ ան չէ ըմբոնուած պէտք եղած եղանակով:

Աթլէթիզմը բաւական դժուար զորձէ, տեւական ճիզի և մրցումի զպրոց մը, հետեւարար փոքրերու և պատանիներու համար կանխահաս է ան, կրնայ մարմնոյ ընդհանուր աճման արգելը հանդիսանալ. 15—16 տարեկան պատանի մը միայն կրնայ սկսիլ փորձերու, ան ալ որոշ սահմանի և որոշ ճիւղերու մէջ: Երկրորդ անպատեհութիւնը հնթակային առողջական վիճակն է, ինչ որ շատ կարեւոր է, պէտք է ուշադրութեան առնել գերյօգնութեան (surmenage) պարագան. տկարակազմ մարմինները աըրամազրելի չեն խոշոր ճիզեր ընելու, անոնք աւելի թեթեւ շարժումներով,

մանաւանդ շուէտական մարդանքներով կրնան իրենց մարմինի առողջութիւնը ապահովել:

Երրորդ կուգայ սննդառութեան խընդիրը, նոյնքան կարեւոր, որովհետեւ աւելորդ է մարզել, յոզնեցնել զնդերները, երբ անոնք չեն նորոգուիր պէտք եղած արեան քանակութեամբ, որ սննդով ձեռք կը բերուի:

Չորրորդ պարագայ, աթլէթիզմի սըխալ մէթոսով կիրառկումը և աշխատութեան սխալ եղանակը:

Այս կարգ մը դիտողութիւնները պէտք է նկատի առնուին նախ ենթակայէն, իր ընտրութիւնը ընելէ առաջ. երկրորդ իր առաջնորդէն, իսկ երրորդ բժիշկէն. այս վերջինը՝ կարծեմ առաջին կարգը պէտք է գասենք, որովհետեւ այն մարզիկը որ կ'ուզէ զաշտ իջնալ, ընդհանուր քննութեան մը պէտք է ենթարկուի, վստահ ըլլալու համար իր առողջական ընդհանուր վիճակին, ներքին զորձարաններու կատարեալ առողջութեան, սննդառութեան և հոգեկան և ֆիզիքական կեանքի մասին: Անզամ մը որ այս բոլոր պարագաները կը ճշգուին, այն ժամանակ կրնաք վստահօրէն վազել, ցատկել, նետել և արդիւնք ձեռք բերել ու կատարեալ առողջութիւն մը ունենալ:

Աթլէթիզմը, լիտասակար պիտի ըլլայ անշուշտ անոնց որոնք վերոյիշեալ պարագաները չեն լրացներ, բայց վստահ կրնան ըլլալ նաեւ որ, պէտք եղած օգուտը ձեռք չպիտի բերեն և յուսահատեցնել մեր երիտասարդները, բայց լաւ է կարծեմ:

* * *

Հոս, բնական է մեր նպատակը չէ աթլէթիզմի դժուարութիւնները և անպատեհութիւնները ցուցնել, տեսակ մը արգելք ըլլալ և յուսահատեցնել մեր երիտասարդները, բայց լաւ է կարծեմ,

Ինչպէս ըսի վերը, տեսնել ամէն բանի լիսասակար կողմերը և անպատճենութիւնները, որովհետեւ «լաւ է կանխելքան բռնժել» կ'ըսէ առածը: Ճիշդ այս նպատակով ուզեցի հակիրճ կերպով ներկայացնել անոր անպատճենութիւնները:

Ինչպէս առհասարակ բոլոր դաշտային խաղերը որոնց sport անունը կուտանք, ունին իրենց օրէնքը և եղանակները, նոյնպէս աթլէթիկ խաղերը ունին իրենց եղանակը և մասնաւոր ուղղութիւնը: Մեր մարմնական կարգ մը պակասութիւնները կամ ըսենք անկատարութիւնները կրնանք սրբազրել արմատապէս, երբ անոնք զնենք կանոնաւոր և կատարեալ շարժումներու մէջ, ըլլան անոնք արտաքին կամ ներքին գործարանները:

(Նար. 1)

ՊԵՐԾ 20:ՔԸԸՆ



ՀԱՅ ԳՆԴԱԽԱՂ ՖՐԱՆՍԱ


ՓԱՐԻԶ

Երկու ամիսէ ի վեր, Հ. Մ. Բ. Մ. ի ֆուտապոլի խումբերուն միջեւ ամէն կիրակի տեղի կ'ունենային մրցումներ, նպատակ ունենալով մասնաճիւղային խումբերը իրենց ոյժին համաձայն դասաւորել, և անոնցմէ ֆուտապոլի խումբեր կազմել, որպէսզի անոնք ալ իրենց կարգին կարենային մրցիլ օտար զօրաւոր խումբերու զէմ:

Սոյն մրցումներուն վերջնական արդիւնքը ճանչցուեցաւ 5 Դեկտ. կիրակի: Երկու ամենազօրաւոր խումբերը, իտաւիի և Սարսէլի մասնաճիւղերը իրարու զէմ եկան Սթատ Բէրշինկի պատույ դաշտին վրայ առառւան ժամը 10.30ին:

Ներկայ էր Հ. Մ. Բ. Մ. ի Շրջանային վարչութեան անդամներուն մեծ մասը, մրցումը վերջացաւ իթալիի 1ի դէմ 4 յաղթանակովը:

Առաւօտուն արդէն տեղի ունեցած էին միացեալ խումբերու փորձերը մեծ յաշողութեամբ:



ՊՈԼԿԻՍ. ԲԵՐԱ-ՇԻՇԼԻ ՀԱՅ ԳՈՒԹԹՈՎԸ ԽՈՒՄԲԸ

Որ 1929ին, խումանիոյ մէջ տեղական խումբի մը ինտ մրցեցաւ: Արդիւնք 3-3 իտասար:

Խաղէն վերջ բոլոր մարզիկները հաւաքուեցան Շրջանային վարչութեան անդամներուն շուրջ, որուն ատենապետը Պ. Ներսէս Օհանեան մրցանակները բաժնելէ առաջ հակիրճ՝ բայց իմաստալից խօսքերով բացատրեց հայ մարզիկներու պարտականութիւնները:

Յետոյ Իտալիի Մասնաճիւղինյանձնեց Յաղթանակի Բաժակը: Իսկ Սարսէլի Մասնաճիւղը ստացաւ Կարգապահութեան դրօշը: Երկու խումբի խաղացողները ստացան զեղեցիկ Մէտայլներ: Իսկ Կոկիկութեան ու Պատոյ Դրօշը վիճակեցաւ Անկէնի Մասնաճիւղին:

Մեծ էր խանդավառութիւնը բոլորին, մարզիկ թէ վարիչ մեկնեցան այն հաստատ համոզումով թէ Հ. Մ. Բ. Մ. Ալիտի կարողանայ մօտ ատենէն ունենալ մէկէ աւելի զօրաւոր ֆուտպոլի խումբեր:

ԽԱՐԱՐ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Հ. Մ. Բ. Մ. Ա. և Պահեստի խառն խումբերը, կիրակի 23 Փետր. իրենց Ա. մրցումը կատարեցին Աթիս Մօնսի Ա. և Բ. Promotion de Division d'Honneur խումբերուն դէմ: Հ. Մ. Բ. Մ. Ալիտի կարգարկութիւնով մը յաղթական դուրս եկաւ 1ի դէմ 2 նշանակէտով:

Սոյն արդիւնքը խիստ գովելի էր նկատի ունենալով որ զանազան Մասնաճիւղերու խումբերէն առնուած խաղացողները գեռ իրարու խաղարկութեան վարժուած չէին,

Ժամը 3.15ին սկսաւ Ա. խումբին մըրցումը: Մեր տղաքը հակառակ քանի մը կարեւոր խաղացողներու պակասին խիստ լաւ խաղարկութիւն մը ունեցան և մինչեւ վերջ տիրապետեցին խաղին: Հակառակ ասոր, հակառակորդ խումբը օդառւելով մեր տղոց իրարու անվարժ ըլլալէն, յաջողեցաւ 2 նշանակէտ նշանակել:

Մեր տղաքը թէն ամէն ճիզ ի գործ դրին, բայց յառաջապահներէն մէկ երկուքին լաւ տրամադրած չըլլալը, արգելք եղաւ իրենց ճիզերը պսակելու:

Այսպէս բազմաթիւ ասիթներ կորսնցուցին: Խաղին լիննալուն 15 վայրկեան մնացած միայն, մեր տղաքը զովելի ջանք մը ընելով, յաջողեցան երկու նշանակէտ շահիլ: Իսկ եթէ քաշուած քիւալթին ալ — որ 90 առ 100 կօլ կարելի էր ընել — յաջողէր հաւանական յաղթանակը մերն էր: Այսպէս ուրեմն խաղը վերջացաւ 2ի դէմ 2 նշանակէտով հաւասար, հակառակ ֆրանս, խմբին յոյսերուն: Մեր տղոց ջանքերը ամէն կերպով զովելի են և խիստ լաւ ապագայ կը խոստանան:

Հ. Մ. Բ. Մ. ի միջմասնաճիւղային փուտպոլի մրցումներու իրը արդիւնք, կազմուեցան խառն Ա. և Բ. Խումբերը լաւագոյն խաղացողներով: Ասկէ զատ Մասնաճիւղերու խումբերը զասաւորուեցան հետեւեալ կերպով: Իտալիի խումբը 1B., Սարսէլ (Reserve), Անկիէն Բ., Ալֆորվի Գ., Ռոնի Դ., Գարակէօպեան Հօմ ժիւնեօր:

Հ. Մ. Բ. Մ. ի Փարիզի Շրջանային Վարչութեան կողմէ փուտպոլի կազմակերպութեան ընդհանուր քարտուղար նշանակուեցաւ Պ. Բ. Ժամուանի, որ պիտի վարէ բոլոր վարչական գործերը:

ԶԱՆԱԶԱՆ

22 Գեկտեմբեր. — Տորք խումբը կը յաղթէ Փարիզի արուարձաններէն Աէն-Մօրի խումբին դէմ 3ի դէմ 6 նշանակէտով:

29 Գեկտեմբեր. — Տորք խումբը Փարիզի արուարձաններէն Մէզօն Ալֆորի մէջ հաւասար կը մնայ Ա. Ա. Ամիքալ խումբին հետ:

3 Յունիուար. — Շուազի Լը Ռուախ խումբը կը յաղթէ Տորք խումբին 2-0 ով:

Հ. Հայ Մարզականը (Խւիօն Սրորթիվ Արմէնիէն) վերսկսած է կրկին: Աէնթ'ուէնի խումբը յաղթեց անոր 1ի դէմ 10 նշանակէտով:

26 Յունիուար. — Հայ Մարզականը կը յաղթէ Շօնիի խումբին 0-2 ով:

Հ. Փարիզի ներկայացուցչական խումբը կը յաղթէ Պէրլինի խումբին 4ի դէմ 6 նշանակէտով:

։ Անցեալ ամիս տեղի ունեցած ֆուտպոլի միջազգային մրցումներէն յիշենք հետեւեալները . —

Սպանիա կը յաղթէ Զեխոսլավաքիոյ (1-0), Բօրթուկալ կը յաղթէ Զեխոսլավաքիոյ (1-0), Իտալիա կը յաղթէ Զուիցերիոյ (4-2):

ԹԷՆԻՍ

ՆՈՅԵՄԲԵՐ . — Լեռոն Ասլանկիւլ, հայ ժանօթ ախոյեանը, որ դեռ հազիւ երեք տարի առուջ աշխարհի 10-15 լաւագոյն խաղացողներէն էր, այլ եւս չի կրնար իր զբաղումներուն պատճառաւ, կանոնաւրաբար մասնակցիւ մրցումներու, թու . Սէնի տօնին առթիւ, թէնիս-Դլիւլ տը Փարիի տախտակամածէ խաղավայրերուն վրայ տեղի ունեցող մրցահանդէսին կը մասնակցէր Ա. Ն. Օթէր կեղծանունով. Ֆինալին Ցրդ մրցումին մէջ, ան յաղթեց Ալէն Ժէրապօի, Փրանսացի նաւորդին որ այնքան համբաւ շահեցաւ աշխարհի շրջանը ընկերով իր փոքրիկ առագաստանաւուն մէջ: Ժէրապօ ալ ասկէ քանի մը տարի առաջ դասուած էր Ֆրանսայի 5րդ խաղացողը:

Լեռոն Ասլանկիւլ յետոյ քառ տը ֆինալին մէջ պարտուեցաւ հոչակաւր ախոյեան ժան Պօրօթրայէ: Իսկ զոյգայրերու մրցումներուն մէջ, ան՝ ընկերակցութեամբ Փրանսացի խաղացող ժօրժի հասաւ մինչեւ Ֆինալ ուր՝ դարձեալ իր դէմ զտաւ Ժ. Պօրօթրան որ իբր ընկեր ունէր թիւրնէսէնը: Բլլայ ժօրժի պէտք եղածին պէս օգտակար չըլլալէն, ըլլայ իր անթրէնըմանի պակասէն, լ. Ասլանկիւլ կորսնցուց այս մրցումն ալ:

ՆՈՅ. 17 ին լ. Ասլանկիւլ Ռուան դացած էր մասնակցելու տեղոյն զոց խաղավայրերուն վրայ տեղի ունեցող մըրցահանդէսին. ան՝ ընկերակցութեամբ Նիքոլա կեղծանունով մրցող ծանօթ խաղացողի մը, շահեցաւ սոյն մրցահանդէսին «զոյգ-այրեր»ու մրցմանց առաջնութիւնը: Իսկ զոյգ-խառն (տուպլը միքս) մրցումներուն մէջ ան տարաւ յաղթա-

նակ մը որ շատ զեղեցիկ էր, մանաւանդ որ իբր ընկերունի ունէր Օր. Աղամօֆը. երկու հայ ախոյեանները յաղթեցին Օր. Պարպիէ-Ժանսիէն ֆրանս, ծանօթ զոյգին՝ բուռն պայքարէ մը վերջ:

։ Ծնունդի առթիւ Փարիզի մէջ տեղի ունեցող թէնիսի մրցահանդէսին (տախտակամածի ձմեռնային խաղավայրերու վրայ) կը մասնակցին բազմաթիւ հայ երկուու խաղացողներ, որոնք են՝ Օրիորդներ՝ Աղամօֆ, Շաղանեան, Տիկ. Ասլանկիւլ, Քրասիլնիքեան, Յակոբեան եղբարք, որոնք քանի մը յաղթանակէ վերջ պարտուեցան: Օր. Շապանեան պարտուեցաւ Օր. Կալէէ, իսկ Տիկ. Խնտամեան Տիկ. Մրէրէնձա-Վէնձէ, որ յետոյ իր կարգին պարտուեցաւ Օր. Աղամօֆէ:

Բնականաբար դարձեալ Օր. Աղամօֆն էր որ ամենափայլուն արդիւնքը կրցաւ ձեռք ձգել, քանի որ հասաւ մինչեւ կանանց մրցումներուն ֆինալը, որ բուռն մրցումէ մը վերջ պարտուեցաւ ծանօթ Փրանսացի ախոյեանունի Օր. Պարպիէէ 8-6, 5-7 և 6-2 սկ: Օր. Աղամօֆ մինչեւ ֆինալ հասնելու համար նախ ստիպուեցաւ մրցիւ և յաղթել Տիկ. Մփէրէնձա-Վէնձէ, Տիկ. Քլէնատէլի (որ զոց խաղավայրերու Ֆրանսայի ախոյեանունին է) Տիկ. Մէօնիէի, ինչ որ հաճելի անակնկալ մ'եղաւ հայ ախոյեանունին կողմնակիցներուն համար իսկ:

Գալով լ. Ասլանկիւլի, ան իր Բ. րդ մրցման համար իսկ իր դէմ զտաւ ծանօթ ախոյեան ժան Պօրօթրան, որ 1ի դէմ 2 սէթով, հետեւաբար դժուարաւ էր որ յաղթեց իրեն:

։ Օր. Աղամօֆ վերսիշեալ մրցահանդէսէն վերջ մեկնեցաւ Մօնթէ-Քարլո, հրաւիրուած ըլլալով մասնակցելու տեղոյն մրցահանդէսին ուրիշ ծանօթ խաղացողներու հետ, ընդ որս հոչակաւոր ամերիկացիներ՝ թիլտէն և Միս Ռայան: Հայ ախոյեանունին կանանց մրցումներուն տրմի - ֆինալին մէջ, որ հասած էր երկու փայլուն յաղթանակներէ վերջ, պարտուեցաւ բուռն պայքարէ

մը վերջ (3—6, 6—3, 6—4). Միս Տայանէ, որ յետոյ շահեցաւ մրցահանդէսը: Տուլլը - տամի մրցումներուն մէջ Օր. Աղամօֆ - Օր. Նէսփէլտ զոյզը հասաւ մինչեւ Ֆինալ: Այլերու մրցումները բը-նականաբար թիւտէն էր որ շահեցաւ:

* * * Հազիւ վերագարձած Մօնթէ Քարլօէ Օր. Աղամօֆ մասնակցեցաւ ձը-մեռնային խաղավայրերու Ֆրանսայի ախոյեանութեան համար տեղի ունեցած մրցումներուն, նոյնալէս Լ. Ասլանկիւն ալ: Այս վերջինը որ սրունքին վրայ վերքի մը ցաւը ունէր և շատ չէր կրնար վազել, ստիպուեցաւ կէս ձգել քառ տը Ֆինալի մէջ Բ. Պուսիւի դէմ կատարած մրցումը, նախապէս յաղթած էր ֆրանսացի ծանօթ խաղացողներէն Քօնպըմալի և Քութանսօնի:

Օր. Աղամօֆ յաղթելէ վերջ նախ Տիկ. Պօժէի և յետոյ համբաւաւոր ա-խոյեանունի Տիկ. Կոլտինկի, արմի Ֆինալին մէջ Յ սէթ տեսող բուռն պայքարէ մը վերջ պարտուեցաւ Տիկ. Պօրտէ, որ Ֆրանսայի Յրդ խաղացողն է (իդական դսկրդ.):

* * * Ինչպէս անցեալ տարի, այս տա-րի ալ «Ապագայ» թերթը պիտի կաղ-մակերպէ հայ երկսեռ խաղացողներուն վերապահուած մրցահանդէս մը, որ տեղի պիտի ունենայ մայիս ամսուան վերջերը:

ԿԵԱՆՔԸ Հ. Մ. Բ. Մ. Ի ՄԷՋ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՍօֆիԱ

Յունուար 7ին Սօֆիայի մէջ տեղի ունեցաւ, Պուլկարիոյ Շրջանային Բնդհ. Ժողովը:

Կը մասնակցէին զանազան շրջաններէ 14 պատգամաւորներ:

Ժողովը որոշեց անփոփոխ պահել Հ. Մ. Բ. Մ. Ի ուղղութիւնը:

Որոշուեցաւ կոթող հատորը պրակով ամսաթերթի վերածել անոր վրայ ա-ւելցնելով չորս էջ մարզական ճիւղ:

Կազմուեցաւ Դատական Մարմին մը,

ինչպէս նաեւ ներքին Ռբագիր - Կանոնա-դիրը պատրաստելու Յանձնախումբ մը:

Բնտրուեցաւ, Շրջանային Վարչու-թիւն մը հինգը՝ Սօֆիայէն, երկուքը՝ Ֆիլիպէէն, ընդամէնը եօթը հոգի:

Յառաջիկայ Զատկին պիտի գումարուի կրկին Բնդհ, Ժողով մը Խասքօվոյի մէջ: ՊՈՒՐԿԱԶ

Պուրկազի Հ. Մ. Բ. Մ. Ի Մասնաճիւղը, որուն ճարզական կրանքի ճառին գրած էի նախորդով, վերջերս գեղեցիկ դադախարը յղա-ցաւ, պարբերաբար հանդիպումներ կազմակեր-պելու Միութեան անդամներու և համակիր-ներու մէջ:

Ա. հանդիպումը տեղի ունեցաւ նոյնձեր 8 ին ի ներկայութեան անդամներու և համա-կիրներու:

Ձերձ մթնոլորտի մը մէջ եղան արտասա-սանութիւններ, մեներգներ, զուարճախոսու-թիւն և այլ անակնկալներ, որոնք մինչեւ ոչ զիշեր խանդավառութեան մէջ պահեցին ներ-կանները:

* * *

Հ. Մ. Բ. Մ. Ի տեղւոյս ֆուտպոլի Ա. խումբը մասնակցեցաւ Պուլկ. Ֆետէրասիօնի կազմէ կազմակերպուած վերջին մրցումին, տեղւոյս 1928—29 տարեցրջանի ախոյեան Սլավիա խումբին հետ:

Մրցումը անցաւ հետաքրքրական և վեր-ջայցաւ 0—3, ի նպաստ պուլկարներուն: Մե-րինները բաւական լաւ խաղարկութիւն մը ի յայտ բերին:

* * *

Հ. Մ. Բ. Մ. Ի տեղւոյս ֆուտպոլի Ա. խումբը նոյնմբերի վերջին կիսուն, Սլվէնի մէջ եղբայրական մրցում մը ունեցաւ Հ. Մ. Բ. Մ. Ի տեղւոյս ֆուտպոլի խումբին հետ, արդիւնք՝ 1—3, ի նպաստ Սլվէնի խումբին:

* * *

Հ. Մ. Բ. Մ. Ի տեղւոյս Մասնաճիւղի նորակազմ ճարզական խորհուրդը յունուարի մէջ սարեկ եղբայրահամակրական Բ. հան-դիպում նը, ուր ներկայ էր՝ Միութեան ան-դամներէ և համակիրներէ կազմուած կոկիկ բազմութիւն մը:

Հանդիպումը բացուեցաւ «Յառաջ Նահաւակարով», որ յատնիկայս ունկնդրաւելով՝ ջերմ ծափերու արժանացաւ:

Ապա, ձեզ ընդ ձեզ եղան արտասանութիւններ, զուարձախօսութիւններ, մեներգ, հայկական պար (այս վերջինը սկառաւաներու կողմէ) և այլ անակնկաններ, որոնք խանդավառ մթնոլորտ մը ստեղծեցին:

Ի ձեզ այլոց ճարզական խորհուրդին կողմէ ամերիկեան ձեւով աճարդի դրաւեցաւ տուփի մը շաքարեղին, որմէ 830 լէվայի դումար մը գոյացաւ:

Ներկաները լաւ տպաւորութեամբ մեկնեցան այս ջերմ շրջանակին:

Մարզական խորհուրդը որոշած է յաճախակի կազմակերպել նման հանդիպումներ, ինչ որ գեղեցիկ գաղափար մըն է:

Պուրկազ

Գ. Ռ. ԶԵԼԵՆԿԻՐԵՎԻ

ՖՐԱՆՍԱ

ՄԱՐՍԵՅ

ՄԵՐՍԵՅ, Գելտեմբեր. — Հ. Մ. Բ. Մ. ի Մարսելի Մասնաճիւղը հիմնուած է 1924 ին,

Հիմնուած օրէն վաւերացուած է զնդախաղի, ճարզախաղի, լողալու և հեծելանիւի ֆէտէրասիւններէն: Այս աճբողջ ճարզերուն մէջ ունեցած է որոշ յաջողութիւններ: Բյժծ ունի ֆուտպովի 6 կանոնաւոր խումբեր, Ա. խումբ, Բ. խումբ, Գ. խումբ, Պատանի Ա. խումբ (յունիօր), Պատանի Բ. խումբ և ունիմես, բոլորն ալ կ'ունենան կանոնաւորապէս իրենց շաբաթական մրցումները: Գնդախաղի ասպարեզին մէջ, սկիզբներուն Հ. Մ. Բ. Մ. ը մասնակցած է չորսրդ դասակարգի ախտեանութեան մրցումներուն, բայց նոյն տարին չունենալով փայտոն յաջողութիւններ, մնաց իր կարգին վրայ, իսկ յաջորդ տարին շատ մը յաղթանակներու շնորհիւ, բարձրացաւ երրորդ դասակարգ, տարի մ'ալ հոն մընաց, բայց չի յուսահատեցաւ, ու 1928—29 ի տարեշրջանին աւելի գորացած հրապարակ ելաւ, տարաւ բազմաթիւ յաղթութիւններ և բարձրացաւ երկրորդ դասակարգի 1929—30 տարւոյ համար:

Այս տարի աւելի լաւ ձանքաւ մէջ կը գտնուի. մինչեւ ցարդ ունեցած է երկրորդ դասակարգի ախտեանութեան մրցումներ, հինգը յաղթութիւններով պատկուած, իսկ վերջինը 3—3 հաւասար մեացած է: Բայց այս մրցումներէն կը մասնակցի նաև Հարաւային Թրանսայի Գաւառային բաժակի մրցան (coupe de province) ու մինչեւ հիմա անցուցած է երեք շրջան, երկուքը յաղթութիւնով իսկ երրորդը 1—1 հաւասար, այս վերջի հակառակորդ խումբը, Հարաւային Թրանսայի գօրաւոր խումբերէն է և կը մասնակցի Թրանսայի բաժակի մրցան, դասակարգով Հ. Մ. Բ. Մ. էն մէկ կարգ բարձր է. խաղը պիսի կրկնակի նախորդին պէս հակառակորդին դաշտին վրայ (A. C. Arles), Առլի մէջ որ Մարսէլլէն 80 բիլումեթր չեռու է:

Մարսէլլի Հ. Մ. Բ. Մ. ի Մասնաճիւղը իր այժմու վիճակով ճարզական ամէն ճիւղի մէջ, կրնամ ըսել թէ ֆրանսահայ ամէնագործունեայ ու ամէնազօրաւոր մասնաճիւղն է որ իր վրայ բիչ խօսիլ տուած է և շատ զործ տեսած:

Յաջորդով սկառաւական գործունեամբեան և աթլէթիկ մրցումներու մասին:

ՎԱՐԴԻԱՆ ՔԻՒՓԵԼԵՎԻ

ՊՐԱԶԻԼԻԱ

ՄԷՆ-ԲԱՌԻ, ՅՈՒՆԻՕ, Յունուար.— Տեղւոյս մէջ կազմուեցաւ Հ. Մ. Բ. Մ. ի Մասնաճիւղ մը և ձեզի ուղարկուեցաւ նորակազմ Մասնաճիւղիս Տեղեկագիրը:

Միութիւնս կը բաղկանայ 45 անդամներէ, որոնք իրենց ժրաշան աշխատութիւններով յառաջ կը տանին զործը: Մինչև այսօր ունեցանք բացման հանդէս մը, բաւական թուով հայրենակիցներուն երկայութեան Ունեցանք նաև փուտպովի փորձեր և մրցումներ օտար խումբերուն հետո: Յաջորդով աւելի մանրամասն տեղեկութիւններ:

ԳՐԻԳՈՐ ՌԱՐԱՔԵՆՃԱՆ

Le Gérant : DIRAN PERTCHEMLIAN

Imp. MASSIS, 208 bis Rue Lafayette, PARIS

ՀԱՅ ՍԿԱՌԻՏ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Պ. Պ. Գարանյան եղբայրներ ՏԱՄԱԼ օրինակ, մէկ տարեկան, յատկացուցինք Սուրբոյ շրջանի Միութիւններուն եւ վարժարաններուն:
- Պ. Արամ Զիթունի, մէկ օրինակ տարեկան, յատկացուցինք Ժընէվի հայ վարժարանին:
- Պ. Վահրամ Ճէնազեան, մէկ օրինակ տարեկան, յատկացուցինք որբանոցի մը:
- Պ. Ա. Գրդոյեան, մէկ օրինակ տար., յատկացուցինք Քալամաթիոյ Վարժարանին:
- Պ. Յ. Յ. Թիկեան, մէկ օրինակ տար., յատկացուցինք Պուսոյ Գարակէօզեան որբանոցին:

ԱՍԱՑԱՆՔ

ԿԱՅՑԱԿ, Մարմնակրթական Ամսաթերթ:

Հասցէ՝ Bein-el-Sourein, Le Caire, Egypte.

ԿՐԿՈՒՆՔ, պատկերազարդ ամսաթիւ, գ. Ե. Ռ. Միութեան:

Հասցէ՝ M. Kurkdjian, 247 Blvd. Voltaire, Paris.

ՍԻԾՆ, Ամսագիր Կրօնական - Գրական - Բանասիրական: Պաշտօնաթերթ Երուսաղէմի հայ պատրիարքութեան:

Հասցէ՝ Rédaction de la revue SION, Patriarcat Arménien, Yérusalem (Palestine)

ԲԱԶՄԱՎԵ, Գրական-բանասիրական ամսաթերթ Վենետիկի Մխիթարեան Միաբանութ.:

Հասցէ՝ Rédaction de la Revue PAZMAVEB, St. Lazare, Venise (Italie).

ԴՐՈՇԱԿ, Օրկան Հ. Յ. Գաշնակցութեան:

Հասցէ՝ Mlle. S. Agopian, 5 rue des Gobelins, Paris (13e)

ԱՐՅԱՆԵԱՐՀԵ ԱԱՏԴ, Օրկան Մ. Ա. Արքերու Ընդհ. Միութեան:

Հասցէ՝ P. O. Box No. 245, Beirut, (Liban).

ՍԻՀՈՒՆ, Գրական Երկշաբաթաթերթ: Հասցէ՝ B. P. No. 718 Beyrouth (Liban).

ՀԱՄԱՍՊՐԱՄ, Եգիպտահայ Ամսագիր: Հասցէ՝ 7 rue Ramli, le Caire (Egypte).

ԲՈՒԺԱՆՔ, Առողջապահական, Գիտական եւ ընկերային Ամսագիր:

Հասցէ՝ Revue POUJANK, 126 Faub. St. Martin, Paris (10e).

ԱՐԱՔՍ, անկախ հայաթերթ: Հասցէ՝ 7 rue Cléopatra, Alexandria, (Egypte).

ԿԱՅՈՒՅԵ, Փարիզեան պատկերազարդ Երգիծաթերթ:

Հասցէ՝ 208 bis rue La Fayette, Paris (10e).

LE FOYER, Ֆրանսահայ Երկշաբաթաթերթ:

Հասցէ՝ 208 bis rue Lafayette, Paris (10e).

ԱՆԱՀԻՏ, Երկամսեայ գրական-բանասիրական Խանութիւն 20 ֆրանք:

Հասցէ՝ ANAHIT, Revue arménienne, 9 rue Say, Paris (9e).

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼՊՈՄ

1930 ԹՈՒԱԿԱՆԻ :

Հրատարակութիւն Հ. Մ. Ը. Մ. Բ. Ռումանիոյ
Երջանի: Ճոխ Նկարներ ազգային նշանաւոր
դէմքերու եւ օրացոյց մը որ կը՝ պարունակէ
կարեւոր դէպքերու թուականները: Գեղեցիկ
կողք եւ մաքուր տպագրութիւն: Քիչ օրինակ-
ներ մնացած են մեր մօտ: Գի՞ 10 ֆրանք:
Դիմել «Հայ Սկառութիւն» վարչութեան:

ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆ

Հեղինակ՝ ՏՕՔԹ. Վ. ՓՈՆՔ
Ամփոփեց՝ ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ամէն անձի, մանաւանդ ամէն սկառութիւնս կարեւոր է այս զիրքը:

Ան ուղեցոյց մըն է բոլորին համար թէ
բարոյական և թէ դործնական տեսակէտով:

Ամէն մարդ պէտք է օրինակ մը ունենայ
և նուիրէ իր բարեկամներուն, եթէ կ'ուզէ
իրապէս անոնց օգտակար ըլլաւ:

Գի՞ Ֆրանսա 10 ֆր., Ամերիկա 5 սէնթ:

Դիմել՝ Dr. Léon KRIKORIAN

126 Faub. St. Denis, PARIS (10^e)

և Հայ Սկառութիւն վարչութեան:

ՀԱՒՄՈՅՑՏԵՐՈՒՆ

Եթէ կը փափաքիք որ ճեր հաւերը ամէն եղանակին առատ
հաւկիթ տան, շուտ մեծնան, շուտ պարարտանան, չի հիւանդա-
նան, եւ համեստ դրամագլուխով խոշոր շահ մը ապահովէք՝ կար-
դացէք 0-Նէրիտնեանի «ՀԱՒՄՈՅՑՏԵՐՈՒՆ» պատկերազարդ գիրքը:
Գի՞ 25 ֆր.: Արտասահման՝ 30 ֆրանք: Հասցէ՝ 18 Villa des Roses,
Bois-Colombes (Seine).

“SPORT”

մեքենական ածելիի գանախներու լաւագոյնը

“JACMAR”

Ելեքտրական լամբերու լաւը եւ աժանք
Մենակըննեկ եւ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ
(Exportation)

ԳՐԱԿԵՐԸ ԸՆՀԱԲԱՏԸՆԼԻ

Պայման եւ գին, գրառոր կերպով հարցնել այն
տուներու ներկայացոցից ժիրայր Մինթանճեանի.—

Girard MINTANDJIAN

90, Rue d'Hauteville, PARIS (10e)

